ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով ...»:

(ՇԱՐԱԿԱՆ)

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր կարգադրությամբ և տնօրինությամբ 2000 թվականի հուլիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սրբազան պատմության մեջ գրվեց մի նոր էջ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հինգ շրջանավարտների սարկավագության աստիճան էր շնորհվելու: Այդ օրը Մայր Աթոռի միաբանության շարքերը գալիս էին համալրելու նորերը:

Կիրակի առավոտյան, Աստվածածնին նվիրված «Գիւտ տփոյ Ս. Աստուածածնի» տոնին, Սուրբ և անմահ Պատարագի սկզբում, հինգ ընծայացուները խոստովանությամբ կանգնել էին Սուրբ Սեղանի առջև՝ Սուրբ Հոգու շնորհներն ստանալու ակնկալությամբ:

Մայրավանքի զանգերը ղողանջեցին՝ ազդարարելով Պատարագի սկիզբը:

Օրվա պատարագիչ և քարոզիչն էր Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, որը Վեհափառ Հայրապետի արտոնությամբ, Հուսիկ Սրբազանի փոխարեն, ուրախությամբ հանձն էր առել հինգ շրջանավարտներին սարկավագության աստիճան շնորհելու:

Սրբազան Պատարագի երաժշտությամբ զմայլված ունկնդիր հավատացյալ բազմությունն ականջալուր եղավ խարտավիլակներ Միքայել և Հայկ ավագ սարկավագների կողմից ընթերցված սաղմոսներին: Բարեշնորհ սարկավագները, ժողովրդի հետ աղոթելով, փոխլուսարարապետ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի ուղեկցությամբ ընծայացուներին ծնկաչոք առաջնորդեցին դեպի Ս. Սեղան: «Ի տես ժողովրդեանն եւ ի վկայութիւն անձանց իւրեանց» ընծայացուներն ուխտեցին խոնարհությամբ իրենց ամբողջանվեր ծառայությունը բերելու մեր Մայր Եկեղեցուն:

Գերշ. Տ. Մեսրոպ Սրբազանը, կարդալով աղոթքները՝ ուղղված Սուրբ Հոգուն, հինգ շրջանավարտներին շնորհեց սարկավագության աստիճան՝ տալով իշխանություն Ավետարան ընթերցելու, Քրիստոսի կենաց մարմնի ու արյան սկիհի վերաբերումը կատարելու և անուշահոտ բուրմամբ խնկարկելու եկեղեցում:

Ձեռնադրությունից հետո պատարագիչ Սրբազանն Ավագ խորանից հավուր պատշաճի քարոզ խոսեց, ապա, անդրադառնալով նորընծաներին, մասնավորապես ասաց.

«Սիրելի՛ սարկավագներ. ձեզ մաղթում եմ աննկուն կամք և անխախտ վստահություն մեր Տիրոջ հանդեպ, որպեսզի կարողանաք փառքով կատարել ձեր վրա դրված պարտականությունները: Անձնական օրինակով հետևեցեք Տիրոջ պատվիրաններին, որպեսզի Տերը առատորեն բաշխի ձեզ Սուրբ Հոգու շնորհները մեր Եկեղեցու պայծառության համար»:

Սուրբ Պատարագի ավարտից հետո, ի պատիվ նորընծաների, Մայրավանքի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվեց սիրո ճաշկերույթ: Գոհության աղոթքից հետո նորընծաներին իր խոսքն ուղղեց Մայր Աթոռի ավագագույն հոգևորականներից Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, որն ասաց.

«Հարգելի սարկավագներ. շնորհավորում եմ ձեզ հոգևոր սպասավորության առաջին աստիճանին արժանանալու առթիվ: Եկեղեցին գրկաբաց ընդունելով ձեզ՝ առաջընթացի իր լուսավոր ճանապարհին մեծ հույսեր է կապում ձեզ հետ: Թող Քրիստոս ուժ և կարողություն պարգևի ձեզ: Հաստատուն եղեք ձեր ընտրած ճանապարհի մեջ»:

Նորընծաների անունից շնորհակալության և երախտագիտության խոսք ասաց Վարդգես սարկավագ Մանուկյանը՝ մասնավորելով սարկավագության կոչման լրջությունն ու կարևորությունը, ծառայասիրության գիտակցությունը, որոնք իրենց սրտից բխելով՝ դարձել էին համոզմունք ու հրամայական՝ «Լինել մշակք առանց ամօթոյ» և բոլորանվեր ծառայելու մեր Եկեղեցուն:

Երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և պատգամով.

«Սիրելի՛ միաբաններ. անչափ ուրախ եմ, որ այս պահին համախմբվել ենք Մայրավանքի սեղանատանը՝ սարկավագական ձեռնադրության ուրախությունը կիսելու մեկս մյուսի հետ: Այս հինգ սարկավագներն ընդամենը մեկ ամիս առաջ դարձան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ, երբ երանք հաջող հանձնեցին սարկավագական քննությունները: Մենք մեծ ուրախությամբ ենք դիտում ձեռնադրված սարկավագներին, և մեր հոգին խանդավառ է, քանզի մեր Եկեղեցին կարիք ունի սպասավորների: Յուրաքանչյուր հայորդի զգում, տեսնում է հոգևորականների պակասը, երբ շրջում է մեր հայրենի քաղաքներում: Ամեն մի քայլափոխի տեսնում ենք Ավետարանի խոսքի ծարավն զգացող մեր զավակներին, տեսնում ենք նաև այլազան քարոզիչներ, որոնք մտնում են հայ ընտանիքներից ներս և փորձում մեր զավակների սրտի պապակը ինչ-որ ձևով հագեցնել:

Ես ցանկանում եմ առանձնակի անդրադառնալ հոգևորականի բարոյական նկարագրին. ճիշտ է, այսօր մեզ պետք է ուսյալ, մտավորական եկեղեցական, բայց արժեք չունի այդ գիտելիքը, եթե եկեղեցականը հոգու կրթություն և բարոյական նկարագիր չունի, եթե հավատքի ու ծառայասիրության ոգի չունի: Գիտելիքն արժեք ունի, երբ այն հավատով է շաղախված, գիտելիքն արժեք ունի, երբ դառնում է ծառայություն, ու երբ եկեղեցականի մոտ կա օրինապահության զգացում, երբ դա դառնում է առաջնորդող ուժ իր կյանքի և ծառայության համար:

Իմ մաղթանքն է, որ դուք կարողանաք վանքի մթնոլորտից, Մայր Տաճարի սըրբազան կամարների ներքո հնչող շարականից կերտել էության մեջ հավատքի այդ ոգին, ծառայասիրության նկարագիրը, օրինապահության կամքը: Գիտելիք կարող են փոխանցել ձեզ, բայց հավատի զգացումը հաղորդությամբ, ապրումով է տրվում: Գիտակցելով ձեր կոչումը և հաղորդ դառնալով մեր հայրերի կյանքին, որոնք կերտել են մեր պատմությունը, այդ զգացումը ձեր մեջ կերտեք՝դարձնելով կամք, ոգի:

Ես ուզում եմ շնորհավորել Մեսրոպ Մրբազանին, որ սիրով հանձն առավ սարկավագության աստիճան շնորհել այս հինգ շրջանավարտներին և աղոթքով խնդրեց Մուրբ Հոգու շնորհները ձեզ: Ես վստահ եմ, որ ժամանակի պահանջները, Եկեղեցու առջև ծառացած բազում խնդիրները, որոնք այսօր սպասում են իրենց լուծումներին՝ մեր եկեղեցականների աշխատանքով պիտի կարողանաք նմանվել մեր շարքերի հոգևորականներին և ձեր կարելվույն չափով փորձել ձեր ներդրումն ունենալ ու զորացնել մեր Եկեղեցին»:

Վաչագան սարկավագ Ղազարյան

Ծնվել է 1977 թ. Առափաշեն գյուղում:

1983-1994 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վարդգես սարկավագ Մանուկյան

Ծնվել է 1976 թ. Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արսեն սարկավագ Շաղոյան

Ծնվել է 1977 թ. Էջմիածին քաղաքում:

1983-1994 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգ սարկավագ Մարգսյան

Ծնվել է 1976 թ. Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Էդգար սարկավագ Սողոմոնյան

Ծնվել է 1975 թ. Երևան քաղաքում:

1981-1990 թթ. սովորել է Երևանի Մայակովսկու անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում:

1990-1994 թթ. սովորել է Երևանի էլեկտրոմեխանիկական տեխնիկումում:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

ԳԵՎՈՐԳ ՄՐԿ. ՄԱՐԳՍՅԱՆ